



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ ՈՒ Ն
27 ապրիլի 2018 թվականի N 81-Ա

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 464-Ա որոշման 4-րդ կետը՝

Կ ա թ գ ա դ Ր ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի «Սիսիանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գույքը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն հանձնելու նպատակով ստեղծել հանձնող հանձնաժողով հետևյալ կազմով՝

Դավթյան Վարդան	ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ, հանձնաժողովի նախագահ
Ասրյան Աշոտ	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
Թադևոսյան Արմեն	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության առողջապահության բաժնի պետ
Գրիգորյան Նարինե	ՀՀ Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ
Ներսիսյան Անուշ	«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն
Թևանյան Վարդուշ	«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի փոխտնօրեն
Հարությունյան Հովհան	«Սիսիանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի հաշվապահ

2. Հանձնաժողովին՝ սույն թվականի մայիսի 2-ից 4-ը ապահովել «Սիսիանի բժշկական կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գույքի հանձնումը Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ընդունող հանձնաժողովին և ենօրյա ժամկետում ներկայացնել տեղեկատվություն:



Handwritten signature